



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Հ Ր Ա Մ Ա Ն

23 Տարբեր 2011թ.

N 681 -Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
8-Ի N1371-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N1005-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետի 4-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2009 թվականի հունիսի 8-ի «Ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման գրքերի կնքման և համարակալման, հարկային մարմնում կնքված ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման գրքերի հաշվառման ընթացակարգը հաստատելու մասին» N1371-Ա հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հրամանի N1 հավելվածով հաստատված ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման գրքերի կնքման և համարակալման, հարկային մարմնում կնքված ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման գրքերի հաշվառման ընթացակարգում (այսուհետ՝ ընթացակարգ)՝

ա. 1-ին կետում «հարկ վճարողներից հայտերի (անհրաժեշտ այլ փաստաթղթերի)» բառերը փոխարինել «հարկ վճարողների հայտերի կազմման և անհրաժեշտ փաստաթղթերի» բառերով,

բ. ընթացակարգի II բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«II. ԱՌԱՔՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՍՈՒՅԹԻ ԳՐՔԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ (ԼՐԱՅՈՒՄԸ) ԵՎ ԱՆՀՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

3. Հարկ վճարողների կողմից տեսչություն ներկայացրած առաքումների, հասույթի գրքերի (այդ թվում՝ հասույթների գրքի «Օրական հասույթների գրանցում (հաշվառում)» մեկ տարվա համար նախատեսված մասի (այսուհետ՝ օրական հասույթների մաս)) կնքման և համարակալման համար ՀՀ կառավարության 31.07.1997թ. N 314 և N 315 որոշումներով սահմանված հայտերը հարկ վճարողի ներկայացրած փաստաթղթերի հիման վրա կազմվում են (լրացվում են) տեսչության հարկ վճարողների սպասարկման կամ տեղեկատվության և վերլուծության բաժնի՝ ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման գրքերի կնքման և համարակալման համար պատասխանատու աշխատակցի (այսուհետ՝ աշխատակից) կողմից: Աշխատակիցը հարկ վճարողի պաշտոնատար կամ լիազորված անձից ընդունում է.

1) ՀՀ կառավարության 31.07.1997թ. N 314 և N 315 որոշումներով հաստատված ձևով համարակալված, թելակարված և կազմված առաքումների, հասույթի գրքերը (թելակարված և կազմված օրական հասույթների մասը),

2) առաքումների, հասույթի գրքերը կնքելու և համարակալելու համար հարկ վճարողի լիազորված անձի կողմից ներկայացվելու դեպքում սահմանված կարգով տրված լիազորագիրը,

3) մինչև տվյալ հասցեի (այդ թվում՝ նույն հասցեի առանձին կետի) համար նախկինում կնքված առաքումների կամ հասույթի գրքի (օրական հասույթների մասի) լրանալ-ավարտվելը կամ դրանց լրանալ-ավարտվելուց հետո նոր գրանցման գիրք (օրական հասույթների նոր մաս) ներկայացնելու դեպքում նախկինում կնքված և համարակալված առաքումների կամ հասույթի գիրքը (օրական հասույթների մասը),

4) տվյալ հասցեի (այդ թվում՝ նույն հասցեի առանձին կետի) համար հարկ վճարողին առաջին անգամ առաքումների և (կամ) հասույթի գիրք տրամադրելու դեպքում՝

ա. հասցեի առկայությունը հիմնավորող իրավասու պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված տեղեկանքը.

բ. տրանսպորտային միջոցներով առևտրական գործունեություն իրականացնող հարկ վճարողների առաքումների գրքերը կնքելու և համարակալելու դեպքում՝ տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի պատճենը, իսկ տրանսպորտային միջոցը վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված լինելու դեպքում՝ համապատասխան պայմանագրի պատճենը:

4. Սույն ընթացակարգի 3-րդ կետի շրջանակներում աշխատակիցը պարզում է.

1) հայտի վավերապայմանների ու տվյալների՝ հարկային մարմնում հաշվառված տվյալների հետ համապատասխանությունը, լիազորված անձի ներկայացրած լիազորագրի համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված պահանջներին,


2) կնքման և համարակալման ենթակա առաքումների կամ հասույթի գրքի բոլոր էջերի համարակալված լինելը, գրքի (օրական հասույթների մասի) կազմված և թելակարված լինելը:

5. Եթե հարկ վճարողի ներկայացված փաստաթղթերը և կնքման ու համարակալման համար ներկայացված գրքերը (օրական հասույթների մասերը) չեն համապատասխանում սահմանված պահանջներին, աշխատակիցը նախ առաջարկում է տեղում վերացնել առկա թերություններն ու բացթողումները, իսկ հարկ վճարողի պաշտոնատար կամ լիազորված անձի կողմից դրանք չվերացնելու կամ տեղում դրանց վերացման անհնարինության դեպքում աշխատակիցը վերադարձնում է ներկայացված փաստաթղթերը և գրանցման ու համարակալման համար նախատեսված գիրքը (օրական հասույթների մասը), հարկ վճարողին տեղեկացնելով մերժման հիմքերի մասին: Հարկ վճարողի ներկայացված փաստաթղթերը և կնքման ու համարակալման համար ներկայացված գրքերը (օրական հասույթների մասերը) սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում, աշխատակիցը կազմված հայտը ներկայացնում է հարկ վճարողին ստորագրման և կնքման (կնիքի առկայության դեպքում): Եթե հարկ վճարողը նախքան առաքումների, հասույթի գրքերը (այդ թվում՝ հասույթների գրքի «Օրական հասույթների գրանցում (հաշվառում)» մեկ տարվա համար նախատեսված մասի (այսուհետ՝ օրական հասույթների մաս)) կնքման և համարակալման համար տեսչություն ներկայացնելն ինքնուրույն կազմել է սահմանված ձևով հայտը, ապա աշխատակիցն ընդունում է հայտը, սույն ընթացակարգի 3-րդ և 4-րդ կետերի շրջանակներում պարզելով նաև հայտը հարկ վճարողի հաշվառման վայրի տեսչություն ներկայացրած լինելը:»,

2) հրամանի N2 հավելվածով հաստատված հարկային մարմնում կնքված առաքումների և հասույթի գրքերի հաշվառման գրանցամատյանի 7-րդ սյունակը «ներկայացման» բառից հետո լրացնել «(կազմման)» բառով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Նախագահ



Գ. Խաչատրյան